Կորպորատիվ Ներդրումների Քաղաքականություն

1. Ներածություն

Կոկա-Կոլա ՀԲՔ-ն Կոկա-Կոլա ապրանքանիշի առաջատար շշալցնողն է ծավալի տեսանկյունից.՝ ավելի քան 2 բիլիոն միավոր արկղ վաճառքով: Այն լայն աշխարհագրական տարածք է ընդգրկում՝ 28 երկիր, որը սպասարկում է մոտ 589 միլիոն մարդ: Կոկա-Կոլա ՀԲՔ-ն առաջարկում է ոչ ալկոհոլային, գազավորված ըմպելիքների լայն տեսականի, հյութեր, ջուր, սպորտային, էներգետիկ ըմպելիքներ, ինչպես նաև թեյի և սուրճի տեսականի: Կոկա-Կոլա ՀԲՔ-ն հանձնառու է խթանել կայուն զարգացումը՝ իր բիզնեսի և հասարակության համար արժեքներ ստեղծելու նպատակով: Ուստի անհրաժեշտ է ապահովել այնպիսի արտադրանք, որը բավարարում է սպառողների կարիքները, խթանել բաց և ներգրավող աշխատանքային միջավայրը, գործել՝ պահպանելով շրջակա միջավայրը և ներդնել տեղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերությունը Դոու Ջոնս Կայունության Ինդեքսով Աշխարհի և Եվրոպայի առաջատար է, ինչպես նաև ընդգրկված է FTSE4Good Ինդեքսում: 28 երկրներում գործունեություն ծավալելով՝ մենք ապահովում ենք առաջնորդություն, աջակցություն և վերահսկողություն յուրաքանչյուր ընկերությանը՝ ամենօրյա կառավարումը վստահելով տեղացի այն աշխատակիցներին, ովքեր ծանոթ են իրենց պետությանը, իրենց բիզնես պրակտիկային և համայնքի ձգտումներին:

Կոկա-Կոլա ՀԲՔ Կորպորատիվ Ներդրումների Քաղաքականության Նպատակը

- Շեշտադրում կատարել՝ կենտրոնացնելով Ընկերության կորպորատիվ ներդրուները 3 ռազմավարական համայնքային ներդրումների ոլորտներում՝ Երիտասարդների զարգացում, Ջրային ռեսուրսների կառավարում և Շրջակա միջավայրի պահպանում, Ակտիվ և առողջ ապրելակերպի խթանում՝ շտապ օգնության հետ մեկտեղ,
- Ոգեշնչել ավելի լավ ապագա ընկերության շահառուների համար և ապահովել երկարատև և կայուն աջակցություն ընտրված շահառուների համար,
- Աջակցել Կոկա-Կոլա ՀԲՔ ընդհանուր բիզնես ռազմավարությունը,
- Սահմանել հստակ կառավարում՝ հաստատելով ամբողջ Խմբի քաղաքականությունը,
- Աջակցել աշխատակիցների ներգրավվածությունը և համայնքային և բարեգործական ներդրումային ծրագրերում,
- Ստանդարտացնել կորպորատիվ ներդրումների ուղեցույցերը ամբողջ Խմբում՝ մեծացնելով մասշտաբները, պարզեցնել և կառուցել համադրության վրա:

Շրջանակ

Այս քաղաքականությունը կիրառելի է Կոկա-Կոլա ՀԲՔ բոլոր կորպորատիվ ներդրումների և բարեգործական նվիրատվությունների համար Խմբի 28 երկրներում, իր բոլոր գործող միավորների և իրավաբանական անձանց համար, ներառյալ Բիզնես Ծառայության Կազմակերպությունը (BSO), Բիզնես Լուծումները և Համակարգերը (BSS) և Կորպորատիվ Ծառայությունների Կենտրոնը (CSC):

2. Մեր Համայնքային Ռազմավարությունը

28 երկրների այն համայնքներում, որտեղ մենք գործում ենք, մենք հայանքի ակտիվ անդամներ ենք:

Մենք գիտակցում ենք, որ մեր բիզնեսը կախված է այն համայնքներից, որտեղ մենք ապրում և աշխատում ենք և կարող ենք միայն լինել այնքան առողջ ու կայուն, որքան նրանք են:

Մենք նպատակ ունենք գործել պատասխանատու կերպով՝ շահառուներին և համայնքներին ներգրավելով՝ կայուն զարգացում ապահովելու նպատակով: Վերջին դարաշրջանում մենք ինտեգրել ենք կորպորատիվ պատասխանատվությունը և կայունությունը այն ամենում, ինչ մենք անում ենք և հավատարիմ լինելով մեր նպատակին և առաքելությանը՝ մենք շարունակաբար ներդնում ենք մեր համայքներում՝ միասին աշխատելով թիրախային բնապահպանական և սոցիալական հարցերի շուրջ:

Մենք աջակցում ենք համայքներին երեք ռազմավարական ոլորտներով և արտակարգ իրավիճակների հարթությունում:

Երիտասարդների զարգացում

Շառ շուկաներում երիտասարդների շրջանում գործազրկությունը մեծ խնդիր է, ուստի մենք աջակցում ենք կրթական ծրագրերին և առաջարկում պրակտիկա, ինչպես նաև խրախուսում անապահով երիտասարդներին՝ մասնագիտական վերապատրաստումներ տրամադրելու և ցանցեր մուտքի միջոցով:

Ջրային ռեսուրսների կառավարում և շրջակա միջավայրի պահպանում

Որպես ջրային ռեսուրսների կառավարման մեր ռազմավարության մաս՝ մենք համագործակցում ենք միջազգային և ազգային կառավարական և ոչ-կառավարական կազմակերպությունների հետ՝ պահպանելու կարևոր գետերի ավազանները և ջրբաժան տարածքները, օրինակ Դանուբը,ինչպես նաև ներդումներ ենք կատարում՝ պահպանելու ճահճային տարածքները և

կենսաբազմազանությունը: Մենք ունենք ջրային ռեսուրսների կառավարմանն ուղղված նախաձեռնություններ բոլոր այն երկրներում, որտեղ այն համապատասխան է:

Ակտիվ ապրելակերպի խթանում

Որպես մեր ռազմավարության առողջության և սննդի մաս՝ մենք աջակցում ենք մի շարք նախաձեռնություններ , որոնք խրախուսում են մարդկանց լինել ավելի ակտիվ: 2014 թ-ին ավելի քան 1,6 միլիոն մարդ մասնակցեց Կոկա-Կոլա ՀԲՔ-ի կողմից կազմակերպված սպորտային ծրագրերին:

Աղետների կանխում

Այն դեպքերում , երբ մեր համայնքները տուժում ենք անսպասելի աղետներից, մենք մեր պարտքն ենք համարում աջակցել նրանց և ներգրավվել արտակարգ իրավիճակների հարթակներում:
Այդ իսկ պատճառով մենք շարունակում ենք հզորացնել մեր համագործակցությունը Կարմիր Խաչի միջազգային ֆեդերացիայի, Ազգային Կարմի Խաչի և այլ հասարակական կազմակերպությունների հետ:
Նմանատիպ համագործակցությունները հնարավորություն են տալիս մեզ արագ արձագանքել աղետներին՝ անվտանդ և ապահով խմելու ջուր մատակարարելով և այլ անհրաժեշտ իրեր մեր լոգիստիկայի և առաքման համակարգերի միջոցով:

3. Սահմանում

Կորպորատիվ ներդրումները ներառում են հետևյալ կատեգորիաները՝

- Դրամական աջակցություն
- Բնամթերային աջակցություն, ինչպիսին է արտադրանքի տրամադրումը
- Հասարակության օգտին ուղղված աջակցություն, որը ներառում, բայց չի սահմանափակվում հասարակական կազմակերպություններին մասնագիտական մակարդակով ծառայությունների մատուցմամբ, կառավառչական փորձի, հմտությունների կիրառմամբ, ժամանակի տրամադրմամբ և աշխատակիցների կողմից աշխատաժամանակի ընթացքում կամավորական աշխատանքների կատարումամբ:

4. Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության և երկրի համապատասխանությունը

Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության կորպորատիվ ներդրումների մեծ մասը կառավարվում է երկրների գործառույթներով:

Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերությունը նպատակ պետք է հավստիանա, որ Ընկերության կողմից աջակցությունն իրականացվում է այս Քաղաքականության և Խմբի Համայնքային ռազմավարության համապատասխան:

Ստորև կարող եք տեսնել Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության կողմից ընտրության և հաստատման գործընթացների մանրամասները:

5. Միջազգային և տեղական կառավարում

Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերությունը իրականացնում է և՛ միջազգային, և՛ տեղական ներդրումներ:

Միջազգային կորպորատիվ ներդրումները կառավարվում են Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության Հասարակական գործերի և Հաղորդակցության թիմի կողմից, մինչդեռ տեղական նախաձեռնությունների համար պատասխանատու են Ընկերության 28 երկրների համապատասխան ֆունկցիաները:

6. Ընտրության չափորոշիչներ և սահմանափակումներ

Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության կողմից աջակցություն ընդունողները պետք է գրանցված լինեն որպես հասարակական կազմակերպություն: Ընտրության գործընթացը պետք է համապատասխանի Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության Կորպորատիվ Աջակցության քաղաքականությամբ սահմանված պայմաններին և նպատակներին: Հիմք ընդունելով այս Քաղաքականությամբ սահմանված նպատակները՝ աջակցություն ընդունողը կընդգրկվի Ընկերության առաջնահերթությունների չորս ուղղություններում՝ երիտասարդների զարգացում, ջրային ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանություն, ակտիվ և առողջ ապրելակերպի խթանում, աղետների կանխում:

7. Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերությունը չի աջակցում՝

- Անհատներին
- Կրոնական, քաղաքական կամ իրավաբանական կազմակերպություններին
- Կազմակերպություններին, որոնք չունեն խտրականության դեմ ընդունված քաղաքականություն (ապահովելու համար, որ նրանք խտրականություն չեն դնում ըստ ռասայի, ազգության, սեռի, կրոնի, տարիքի, ծագման, քաղաքացիության, սեռական պատկանելության, գենդերային ինքնության/արտահայտման կամ հաշմանդամության)
- Կազմակերպությունների, որոնք ուղղակիորեն ներգրավված են շահումային խաղերին, անօրինական թմրամիջոցներին, ծխախոտին և սպառազինությանն առընչվող բիզնես գործընթացներում (բացառությամբ

այն բարեգործական ընկերությունների և կազմակերպությունների, որոնք սեղծվել են կախվածության և թմրամիջոցների դեմ պայքարելու նպատակով)

- Տեղական մասնագիտական սպորտային ակումբների և ատլետների խմբերին
- Ճամփորդական ընկերություններին
- Հուշարձաններին կամ կոթողներին
- Ընտանեկան միավորումներին
- Գեղեցկության մրցույթներին կամ առևտրային ծրագրերին
- Մարքեթինգային կամ գովազդային ծրագրերին
- Հողամասի, շինության կամ սարքավորումների կառուցման կամ վերանորոգման ծրագրերին
- Կազմակերպություններին, որոնք չեն հարգում մարդու իրավունքները ՄԱ Բիզնեսի և Մարդու Իրավունքների Ուղեցույցային սկզբունքներին և ԱՄԿ կոնվեցիայի բանաձևերին համապատասխան
- Ցանկացած գործունեության, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ բնության/կենսաբազմազանության վրա
- Կազմավորումներին, որոնք չունեն բավարար կայունություն և մաքուր հարաբերություններ իշխանությունների հետ

Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերությունը կաջակցի միայն այն կազմակերպություններին, որոնք չեն հակասի Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերության բիզնեսի սկզբունքներին և Գործարար վարքագծի կոդեքսին և ամբողջությամբ կբացահայտեն որևիցե կոնֆլիկտի կամ շահերի բախման առկայությունը:

8. Կոկա-Կոլա ՀԲՔ ընկերությունը նախընտրում է աշխատել այն հասարակական կազմակերպությունների հետ, որոնք՝

- Ունեն երկարաժամկետ նպատակներ, որոնք հասարակայնորեն հրապարակված են
- Հանձնառու են կայուն զարգացմանը
- Լավ կերպով են ընկալված շահառուների կողմից
- Խրախուսում են շահառուների ներգրավումը և կամավորականությունը
- Թափանցիկ են իրենց գործողություններում և հասարակայնորեն զեկուցում են դրանց վերաբերյալ

9. Նվազեցնելով ռիսկը

Ստորև ներկայացված ուղեցույցները բացատրում են՝ ինչպես նվազեցնել կորպորատիվ ներդրումների հետ կապված ռիսկերը.

- Կորպորատիվ ներդրումներ կատարելու որոշումները պետք է հաստատվեն Ընկերության հեղինակության սխեմային համապատասխան
- Համոզվել, որ կորպորատիվ ներդրումենրը չեն օգտագործվում կաշառքի քողի ներքո
- Նոր ստացողների կամ գործընկերների աշխատասիրությանը համապատասխան կատարողականություն
- Տեղյակ լինել հնարավոր շահերի բախումից
- Խուսափել նվիրատվություններից ու հովանավորություններից, որոնք կարող են ընկալվել որպես քաղաքական ներդրում
- Ստանալ Կոկա-Կոլա ՀԲՔ-ի Իրավաբանական բաժնի համաձայնությունը, եթե որևէ կառավարական պաշտոնյա հանդիսանում է հասարակական կազմակերպության ղեկավար կամ ինչ-որ կերպ սերտորեն կապված է այդ կազմակերպության հետ և խնդրում է Ընկերությունից նվիրատվություն կատարել այդ կազմակերպությանը
- Համոզվել, որ բոլոր վճարումները հստակորեն նշված են հաշվեհամարներում
- Խուսափել որևէ գաղտնիության դրույթներից նվիրատվության կամ հովանավորության պայմանագրերում, ինչը թույլ կտա ազատորեն հանրայնորեն հրապարակել նման նվիրատվությունները
- Նվիրատվություններ կառավարական գործակալություններին թույլատրելի են, եթե.

  ա) Կոկա-Կոլա ՀԲՔ-ի իրավաբան խորհրդատուն քննարկել է այն տեղական օրենքի թույլատրելիության սահմաններում, բ) Չկա որևէ ակնկալում, որ նվիրատվությունը տրվել է կառավարության կողմից ծառայության կամ բիզնես առավելության դիմաց:

10. Աշխատակիցների կամավորություն

Կոկա-Կոլա ՀԲՔ քաջալերում է աշխատակիցներին տրամադրել իրենց ժամանակը և փորձը տեղական համայնքին և համայնքին աջակցող կազմակերպություններին, ինչպես նաև նվիրաբերել ժամանակի ճիշտ կառավարումն ու փորձը հասարակական կազմակերպություններին իրենց առօրյա գործողություններում օգնելու համար:

11. Կառավարում

Կոկա-Կոլա ՀԲՔ-ի «Կորպորատիվ նվիրատվությունների քաղաքականությունը» իրականացվում է Խմբի Հասարակական գործերի ու հաղորդակցության թիմի կողմից: Առաջարկությունները վավերացվում են Կայունության վերստուգող հանձնաժողովի կողմից Ընկերության Գործող Կոմիտեի և Սոցիալական

պատասխանատվության կոմիտեի տնօրենների խորհրդին նախօրոք ներկայացված նյութերի հիման վրա: Բոլոր կազմակերպությունները, որ աջակցություն են խնդրում հստակ սահմանված ժամկետներում կտեղեկացվեն որոշման մասին:

12. Վճարման պայմաններ և պայմանագրեր

Կոկա-Կոլա ՀԲՔ ունի ստանդարտ վճարման պայմաններ, ներառյալ՝ հիմնադրամներին ու հասարակական կազմակերպություններին կատարվող նվիրատվությունները: Բոլոր գործընկերությունները պետք է հաստատվեն համապատասխան փաստաթղթերով, այսինքն՝ պայմանագրերով, էթիկայի կոդին հետևելու հռչակագրերով և այլն: Պայմանագիրը պետք է մանրամասն նշի վճարվող գումարը, վճարման ժամկետները, նվիրատվության նպատակն, ինչպես նաև համապատասխան տեղեկությունը և ենթարկվում է Կոկա-Կոլա ՀԲՔ-ի տեղական իրավաբանական բաժնի կամ Կորպորատիվ ծառայության կենտրոնի վերանայմանն ու հաստատմանը:

13. Գնահատման, հաղորդակցության և վերականգնման գործընթացը

Կոկա-Կոլա ՀԲՔ գնահատում է իր կորպորատիվ ներդրումների արդյունավետությունն ու ազդեցությունը: Գնահատումը կներառի .

•Համոզվել, որ դիմորդը համապատասխանում է և շարունակում է համապատասխանել Կոկա-Կոլա ՀԲՔ-ի «Կորպորատիվ Ներդրումների քաղաքականության» պայմաններին ու նպատակներին:

•Կոկա-Կոլա ՀԲՔ հաճախակի երկխոսություն է ապահովում այն կազմակերպությունների հետ, որոնց այն աջակցում է գործող նախագծերի կառավարումը բարելավելու և ապագա հնարավորությունները որոշելու համար: Ի հավելումն, բարեգործական, հասարակական և ոչ կառավարական կազմակերպությունները հաճախակիորեն հրավիրվում են մասնակցել Կոկա-Կոլա ՀԲՔ-ի ամենամյա «Գործընկերների ֆորումին», որն օգնում է գնահատել ու որոշել Ընկերության կայունության ռազմավարության բովանդակությունն ու համապատասխանությունը:

• Կոկա-Կոլա ՀԲՔ նաև ստանձնում է տեղեկացնել իր կորպորատիվ ներդրումային ծրագրերի մասին իր աշխատակիցներին և լայն հանրությանը Ընկերության հիմնական հաղորդակցային ուղիների միջոցով որպես ավելի լայն ջանքերի մաս, որով քաջալերում է աշխատակիցների և գործընկերների ներգրավածությունը կամավորական նախաձեռնություններում:

14. Այս քաղաքականության վերանայումն ու փոփոխությունը

Այս քաղաքականությունը վերանայվում է առնվազն տարին մեկ անգամ Կոկա-Կոլա ՀԲՔ-ի Խմբի Հանրային Գործերի ու հաղորդակցության թիմի կողմից. ինտեգրվում են նոր դասերը, հավաքվում է գործընկերների արձագանքը և քաղաքականությունը համալրվում է:

Վերջին վերանայում	**Տարբերակ 1.0**	**Ամսաթիվ**
Հեղինակ	ՀԳևՀ Տնօրեն Է. Մարկարյան	15.12.2016
Համաձայնեցված է	Կայունության Տնօրեն Վահան Ստեփանյան	20.12.2016
Հաստատված է	Գլխավոր Տնօրենի ժ/պ Արսեն Վահանյան	19.01.2017